ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵՔ

374
К-27

# ԲԱՆՎՈՐԱԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԻ ԱԿՈՒՄԲՆԵՐԻ ՅԵՎ ԼԵՆԻՆՅԱՆ ԱՆԿՈՒՆՆԵՐԻ ՆՈՐՄԱԼ ԿԱՆՈՆԱԳԻՐՔ

1928 թ. ՅԵՐԵՎԱՆ

ՀԱՅԿ. ՀՐ"Զ. ԴԻՎ. ՔԱՂԲԱԺՆԻ ՀՐԱՏԱՐԱԿ.

374
Բ-27
- MAR 2010

# ԲԱՆՎՈՐԱԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԻ ԱԿՈՒՄԲՆԵՐԻ ՅԵՎ ԼԵՆԻՆՅԱՆ ԱՆԿՅՈՒՆՆԵՐԻ ՆՈՐՄԱԼ ԿԱՆՈՆԱԳԻՐՔ

14359-57
119

1928 թ. ՅԵՐԵՎԱՆ

ՀԱՅԿ. ՀՐԱՋ. ԴԻՎ. ՔԱՂԲԱԺՆԻ ՀՐԱՏԱՐԱԿ.

0 1 MAR 2013

52.160

ՀԱՅՊՈԼԻԳՐԱՖԻ I ՏՊԱՐԱՆ
ՊԱՏՎԵՐ № 326
ԳՐԱՌԵՊՎԱՐ 1027 Բ.
ՏԻՐԱԺ 2000

**Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության Հեղափոխական-Ռազմական Խորհրդի № 353 հրամանից**

*6 հուլիսի* 1927 *թ.* *ք. Մոսկվա*

1. *Մտցնել գործունեության մեջ առընթեր հայտարարվողներ՝*

*ա) «ԲԳԿԲ ցամաքային, ծովային և օդային ուժերի զորամասերի ու հիմնարկությունների ակումբների ու Լենինյան անկյունների նորմալ կանոնադրքը» (խաղաղ ժամանակի համար):*

2. *ՀՌԽ* 1923 *թվի* № 829 *հրամանը վերացնել:*

*ԽՍՀՄ Ռազմածովային ժողկոմի և ՀՌԽ նախագահի տեղակալ՝ Ս. ԿԱՄԵՆԵՎ.*

ՀԱՍՏԱՏՎՈՒՄ Ե
ԽՍՀՄ Ռազմածովային ժողկոմի և Հեղափոխական-Ռազմական Խորհրդի նախագահի տեղակալ Ս. ԿԱՄԵՆԵՎ
6 հուլիսի 1927 թ.

# ԲԱՆՎՈՐԱ-ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԻ ՑԱՄԱՔԱՅԻՆ, ԾՈՎԱՅԻՆ ՅԵՎ ՈԴԱՅԻՆ ՈՒԺԵՐԻ ԶՈՐԱՄԱՍԵՐԻ ՈՒ ՀԻՄՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿՈՒՄԲՆԵՐԻ ՅԵՎ ԼԵՆԻՆՅԱՆ ԱՆԿՅՈՒՆՆԵՐԻ ՆՈՐՄԱԼ ԿԱՆՈՆԱԳԻՐՔ

(ԽԱՂԱՂ ԺԱՄԱՆԱԿԻ ՀԱՄԱՐ)

## I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՍ

1. Կարմիր բանակային և կարմիր նավատորմային ակումբները և լենինյան անկյունները արտադպրոցական կազմակերպություններ են, վորոնք կառուցվում են լայն հասարակայնության ու ինքնագործունեության սկզբունքներով խնդիր ունենալով՝ կազմակերպել կարմիր բանակայինների ու նավաստիների հանգիստը, և տանել ռազմական ու ռազմա-քաղաքական աշխատանք՝ Կարմիր բանակի մարտունակությունն ամրացնելու նպատակով:

2. Այդ հիմնական կոչմանը համաձայն, ակումբները և լենինյան անկյունները իրենց առաջ դնում են հետևյալ խնդիրները՝

ա) դաստիարակել Կարմիր բանակայինների ու կ. նավատորմայինների մեջ անձնուրաց նվիրվածություն դեպի խորհրդային իշխանությունը, անվերապահ հավատ դեպի կոմունիստական կուսակցությունը և նրա քաղաքականության գիտակցումը՝ վորպես ԽՍՀՄ-ում սոցիալիզմի կառուցման և ամբողջ աշխարհում դեպի սոցիալիզմի հաղթանակը տանող միակ և ճիշտ քաղաքականություն.

բ) աջակցել Կարմիր բանակա-



յինների ու կ. նավատորմայինների կողմից ներկա քաղաքական միջազգային ու ներքին դրության վերաբերվող բոլոր հարցերի և այստեղից բխող Խորհրդային Միության պաշտպանության ու Կարմիր բանակի՝ պրոլետարիատի դիկտատուրայի զինված հենարանի խնդիրների ճիշտ ըմբռնմանը: Յեվ վերջապես, աջակցել ըմբռնելու իրենց՝ վորպես խորհրդային իշխանության պաշտպանության համար յուրաքանչյուր րոպե դուրս գալու պատրաստ՝ մարտիկների խնդիրը.

գ) աջակցել խոր գիտակցելու կ. բանակայինների ու կ. նա-

վատորմայինների կողմից, բանվոր դասակարգի ու գյուղացիության ամուր դաշինքի կարևորությունն ու անհրաժեշտությունը, վորն իրականացվում է բանվոր դասակարգի ու նրա առաջնորդ կոմունիստական կուսակցության ղեկավարության տակ.

դ) դաստիարակել կարմիր բանակայինների ու կ. նավատորմայինների մեջ համերաշխության զգացմունք՝ իմպերիալիզմի լծից ազատագրվելու համար պայքարող միջազգային պրոլետարիատի ու արևելքի ժողովուրդների հետ, հասկանալու՝ այն անբաժանելի կապը, վորը գոյություն ունի ԽՍՀՄ սոցիալիստա-



կան շինարարության պաշտպանության և միջազգային հեղափոխական պայքարի զարգացման ու Կոմինտերնի, ինչպես համաշխարհային հեղափոխության ըշտաբի, գործնեության հետ.

յե) կարմիր բանակայիններին և կ. նավատորմայիններին դաստիարակել բոլոր ժողովուրդների հավասարության ու բոլոր ազգերի աշխատավորության սերտ միության հասկացողության և զանազան ազգությունների կարմիր բանակայինների մարտական, ընկերական միաձուլության ամրացման վոգով.

զ) դաստիարակել կարմիր բանակայինների և կ. նավատորմա-

յինների մեջ բանվորա-գյուղացիական Կարմիր բանակի մարտիկի պատվավոր կոչմամբ հպարտանալու զգացմունք, դաստիարակել նրանց մեջ հավատարմություն դեպի Կ. բանակի մարտական տրադիցիաները, հետաքրքրություն դեպի ռազմական գործը և զանազան մասնագիտական զորամասերի մարտական կապի ու զոդման ամրացումը՝ ԲԳԿ բանակի բոլոր զորամասերը միացնող նրանց խնդիրների ընդհանրության տեսակետից.

ե) կարմիր բանակայինների և կ. նավատորմայինների ռազմական ու ռազմա-քաղաքական վորակի բարձրացումը, մարտական



հատկությունների դաստիարակումը և ժամանակակից պատերազմների պայմաններում մարտիկին անհրաժեշտ սովորույթների զարգացումը, նրանց փիզիքական առողջացումն ու առողջապահական դաստիարակությունը.

ը) զորամասի ամբողջ կազմի մարտական միաձուլության ամրացումը կուսկազմակերպության շուրջը, շարքային և պետկազմի միջև ընկերական զոդման զարգացումն ու ուժեղացումը, և կարմիր բանակայինների ու կ. նավատորմայինների մեջ կոլեկտիվ աշխատանքի ու հասարա-

կայնության հատկությունների մշակումը.

թ) դաստիարակել կարմիր բանակայինների և կարմիր նավաստիների մեջ շրջապատող կյանքի հարցերը գիտակցորեն և ինքնուրույն վերլուծելու և քաղաքական, ռազմական ու ընդհանուր կրթական գիտելիքները սեփական նախաձեռնությամբ գործադրելու և ուսումնասիրելու կարողություն.

ի) կազմակերպել շարքային, և պետկազմի ու նրանց ընտանիքների արտապաշտոնեական կենցաղը, բավարարել նրանց պահանջները խելամիտ հանգստով ու զվարճալիքներով.



լ) ամրացնել Կարմիր բանակի կապը աշխատավոր բնակչության հետ, մասնավորապես Բանվորա-Գյուղացիական Կարմիր Նավատորմի կապի ամրացումը իր շեֆ՝ Լենինյան Կոմունիստական Յերիտասարդական Միության հետ և բոլոր միջոցներով աջակցել Խորհրդային Միության պաշտպանության պատրաստման գործին.

խ) ոժանդակել փոփոխիկ-կարմիր բանակայինների, յերկրային զորամասերի հավաքներում ստացած գիտելիքների և սովորքների ամրացմանն ու զարգացմանը, պահպանել նրանց շարքերում մարտական միաձուլության և

ամրացնել փափոխիկ կազմի կապը բնակազմի հետ:

3. Ակումբների և Լենինյան անկյունների աշխատանքը կառուցվում է կամավորական, լայն ինքնագործունեության և հասարակայնության հիմունքներով, ապահովելով զինծառայողի պահանջների բավարարումը հանգստում: Դա իրագործվում է նրանով, որ այդ աշխատանքը հիմնականում ելնում է զինծառայողի հարցումներից ու շահերից, տարվում է զանազանակերպ ու գրավիչ ձևերով, և կառուցվում է առօրյա ընթացիկ նյութերի վրա:

Ակումբային կազմակերպու-



թյունների գործունեությունը պայմանավորվում է մասնակցողների կողմից սահմանված հասարակական կարգապահության պահպանմամբ և յուրաքանչյուրի իր աշխատանքի նկատմամբ՝ կարմիրբանակային մասսայի առաջ ունեցած պատասխանատվությամբ:

4. Զորամասում տարվող ամբողջ արտադպրոցական աշխատանքների ընդհանուր ղեկավարությունը պատկանում է ռազմական կոմիսարին, որն այդ իրականացնում է ակումբի պետի միջոցով (այնտեղ, որտեղ այդպիսին չկա, քաղաքական ղեկավարի միջոցով): Ակումբի պետը ուղղություն է տալիս և հրա-

հանդում է ակումբային կազմակերպությունների ու ակումբի աշխատողների, ակումբային աշխատանքին մասնակցող միջին ու կրտսեր պետկազմի, շարքային կազմի, և փաշտերի (մարտկոցի, հեծելավաշտի, և այլն) քաղաքական ղեկավարների ու կարմիր սեղանների վարիչների գործունեությանը: Ծրագրային ցուցումներ է տալիս բոլոր արտադպրոցական կազմակերպություններին և համակենտրոնացնում է իր մոտ զորամասում տարվող արտադպրոցական աշխատանքների հաշվառումը:

5. Զորամասերի ՀամԿԿ(բ) և ՀամԼԿՅԵՄ կազմակերպություն-



ները ամենագործոն ու ակտիվ մասնակցություն են ցույց տալիս արտադպրոցական աշխատանքներում գաղափարական-քաղաքական ղեկավարությունն իրագործելում, և դրանով իսկ նպաստում են ակումբներին ու լենինյան անկյուններին կատարելու կոմունիստական դաստիարակման խնդիրները՝ համախմբելու նրանց կոմունիստական բջիջների շուրջը:

## 2. ԼԵՆԻՆՅԱՆ ԱՆԿՅՈՒՆՆԵՐ

### ԼԵՆԻՆՅԱՆ ԱՆԿՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄՈՒՄԸ

6. *Լենինյան անկյուններն իրենց անունները կրում են ի հիշատակ ամբողջ աշխարհի աշխատավորության մեծ առաջնորդ և ուսուցիչ՝ Վլադիմիր Իլյիչ Լենինի։*

7. *Լենինյան անկյունները կազմակերպվում են ամեն մի վաշտում, մարտկոցում, հեծելավաշտում ու խմբերում, նույնպես և այն նավերում, որտեղ հատուկ ակումբ տրված չէ։*



*ԾԱՆՈԹ.—4-րդ կարգի և այնպիսի նավերում, որտեղ լենինյան անկյան համար հատուկ սենյակ տալու հնարավորությունը բացակայում է (սուզանավերը, տորպեդանավերը և այլն) ըստ հնարավորության կազմակերպվում են կարմիր սեղաններ։*

8. *Լենինյան անկյան անմիջական կոչումն է.—*

*ա) սպասարկել կարմիր բանակայինների և կարմիր նավատորմայինների հանգստին ու բավարարել նրանց կուլտուր-քաղաքական հարցումներին.*

*բ) քաղաքական – լուսավորական, ռազմական և սպորտ աշխատանք տանել անմիջականորեն*

կարմիր բանակայինների և կարմիր նավատորմայինների հանրակացարաններում․

գ) ամեն կերպ աջակցել վաշտի ՀամԿԿ(բ) բջիջին ու կուսակցությանն օժանդակող կոմյերիտական խմբակին, կարմիր բանակայինների և կարմիր նավաստիների մեջ նրանց տարած աշխատանքներում և կուսակցականների ու կոմյերիտականների դաստիարակման գործում:

9․ Համաձայն իր կոչման, լենինյան անկյունը՝

ա) իր տեղն ու պարագաները կահավորում և հարմարեցնում է հանգստի ու քաղ-լուսավորական աշխատանքների համար․



բ) զանազան ձևերով անց է կացնում մասսայական աշխատանք․

գ) կազմակերպում է ինքնագործունեության զանազան խմբակներ:

ԾԱՆՈԹ․—Նավերի վրա, լենինյան անկյուններում, ըստ հնարավորության նույնպես կարող են կազմակերպվել խմբակներ և անցկացվել ինքնակրթական աշխատանքներ:

դ) կարգավորում է վաշտի (նավի) գրադարանի աշխատանքը․

յե) ամուր կապ է հաստատում զորամասի ակումբի ու մյուս լենինյան անկյունների հետ (նավա—

տորմում՝ կարմիր սեղանների հետ) և բոլոր հասարակական կազմակերպությունների բջիջների, բանվորական, կոմերիտական և մյուս քաղաքացիական կազմակերպությունների հետ:

10. Լենինյան անկյան անմիջական ղեկավարությունը և նրա աշխատանքի նկատմամբ պատասխանատվությունն ընկնում է քաղաքական ղեկավարի վրա (վաշտի, մարտկոցի, հեծելավաշտի, նավի կոմանդայի և այլն, հրամանատարի քաղօգնականի վրա), իսկ այնտեղ, որտեղ այդպիսիները ըստ հաստիքի չկան, կոմիսարի կողմից նշանակված մի կուսակցականի վրա:



Նրա վրա դրվում է՝

ա) լենինյան անկյան խորհրդին նախագահելն ու նրա աշխատանքների ղեկավարությունը.

բ) լենինյան անկյան խմբակների ղեկավարների և աշխատանքների մյուս կազմակերպիչների հաստատումը.

գ) վաշտի գրադարանապետի ղեկավարությունը.

դ) վաշտի պետկազմի և բանակայինների գրավումը դեպի լենինյան անկյուն և նրանց աշխատանքների հրահանգումը,

ե) լենինյան անկյան գործունեության համաձայնեցումը վաշտի ամբողջ քաղաքական և շարային աշխատանքների հետ.

գ) լենինյան անկյան աշխատանքների համաձայնեցումը գընդի ակումբի աշխատանքի հետ, նավերի վրա՝ կարմիր սեղանների աշխատանքների հետ. անմիջական մասնակցությունը լենինյան անկյան աշխատանքներում:

Քաղաքական ղեկավարն իր ամենօրյա ղեկավար գործունեությունը սերտորեն կապում է վաշտի (զորամասի) ՀամԿ(բ)Կ բըջիջի աշխատանքների հետ:

ԾԱՆՈԹ.—Նավերի վրա, որտեղ ըստ հաստիքի կան մի քանի քաղղեկներ, լենինյան անկյան վարիչի աշխատանքը, կոմիսարի հայեցողությամբ, հանձնարարվում է նրանցից մեկին.



## ԼԵՆԻՆՅԱՆ ԱՆԿՅԱՆ ՏԵՂՆ ՈՒ ԿԱՀԱՎՈՐՈՒՄԸ

11. Լենինյան անկյան տեղը հատկացվում ու կահավորվում է անմիջապես կարմիր բանակային զորանոցներում, նավերի վրա բնակելի մասում և այլն:

ԾԱՆՈԹ.—Ճամբարային շըրջանում, ամեն մի վաշտի զորատեղում, լենինյան անկյան համար կահավորվում է առանձին վրան կամ շինվում է հատուկ զրուցարան բացատով: Նավերի վրա, ամառային շըրջանում, լենինյան անկյունն իր աշխատանքը, ըստ հնարավորության, անց է կացնում վերին տախտակամածի վրա:

12. Լենինյան անկյան տեղը համարեցվում ե հանգստի, ընթերցանության և մասսայական աշխատանք անցկացնելուն: Իր կահավորությամբ և ներքին կարգ ու սարքով լենինյան անկյունը պետք ե ամեն կերպ գրավի կարմիր բանակայիններին ու կարմիր նավատորմայիններին և ապահովի նրանց համար ժամանակ անցկացնելու հաճելի, հանգիստ և առողջ պայմաններ:

ԾԱՆՈԹ.— Հնարավորություն լինելու դեպքում, լենինյան անկյունը մասսայական աշխատանքների համար կառուցում ե բեմ, կոտորիկներով հրաձգության համար ձգարան և սպորտանկյուն:



13. Լենինյան անկյունը զարդարվում ե առաջնորդների պատկերներով և նկարներով: Բացի դրանից, լենինյան անկյունը սարքում ե հատուկ տախտակներ որվա կարևոր հարցերի շուրջը, կազմակերպում ե եպիզոդիկ ցուցահանդեսներ ու անկյուններ, ընթացիկ նյութերի շուրջ կախ և տալիս պլակատներ ու լոզունգներ:

14. Լենինյան անկյունը կենտրոնացնում ե՝ կարմիր բանակայիններին և կարմիր նավատորմայիններին իրենց հանգստի ժամերին զբաղմունք և զվարճություն պատճառող բոլոր նյութերն ու իրերը (թերթեր,

պատկերազարդ հանդեսներ, խաղեր), խմբակային աշխատանքի համար պետք յեղած իրերն ու գործիքները և անհրաժեշտ սպորտային գույքը:

15. Լենինյան անկյունը աշխատանքները զարգացնում է նաև իրեն գտնված տեղի պատերից դուրս՝ կարմիր բանակայինների ու կարմիր նավատորմայինների հանրակացարաններում, վաշտի բնակատեղում, բակում, տախտակամածի վրա և այլն:

## ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

16. Լենինյան անկյան մասսայական աշխատանքը նպատակ ունի՝



ա) լայն չափով լենինյան անկյուն քաշել վաշտի (զորամասի) կարմիր բանակայիններին և կարմիր նավատորմայիններին.

բ) կարմիր բանակայինին և կարմիր նավատորմայինին ապահովել նրանց հետաքրքրող հարցերի պատասխաններով.

գ) արթնացնել կարմիր բանակային մասսայի հետաքրքրությունը, նախաձեռնությունը, ակտիվությունը և ստեղծագործական ուժերը.

դ) հայտաբերել առանձին կարմիր բանակայինների և կարմիր նավատորմայինների և ինքնագործունեության խմբակների առաջադիմությունները.

յե) կարմիր բանակայինին և կարմիր նավատորմայինին հատկացնել խելացի և առողջ զվարճության հնարավորություններ:

17. Մասսայական աշխատանքը լենինյան անկյունում տարվում է սիստեմատիկորեն և հայտաբերվում է բազմատեսակ ձևերով (զրույցներ, քաղուսումնասիրություն, զեկուցումներ, աշխատանք գրքի և թերթի հետ, մրցակցություններ, գեղարվեստական-թատերական ձևեր, տեղեկատու աշխատանք, ինքնագործունեության յերեկոներ, համակցության յերեկոներ, էքսկուրսիաներ և այլն...):



ԾԱՆՈԹ.—Տեղեկատու աշխատանք տանելու համար, լենինյան անկյանը կից հիմնվում է տեղեկանքների սեղան և հարց ու պատասխանի տետր:

18. Մասսայական աշխատանքը լենինյան անկյունում կազմակերպվում է՝

ա) քաղղեկի, հրամանատարների, լենինյան անկյան հերթապահների և առանձին ակտիվ կարմիր բանակայինների կողմից.

բ) լենինյան անկյան խմբակների կողմից.

գ) բանվորական և կոմյերիտական շեֆական կազմակերպությունների կողմից.

դ) գնդի ակումբի խմբակների

ու կամավոր ընկերությունների, բջիջների ու կարմիր սեղանների ուժերով.

յե) Համկկ(բ) բջիջի և կուսակցության աջակցող խմբակի հանձնարարությամբ, կուսանդամների և կոմյերիտականների կողմից:

## ԽՄԲԱԿՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԸ

19. Խմբակը հանդիսանում է կարմիր բանակայինների ու կարմիր նավատորմայինների կամավոր և ինքնագործնեական միացում, վորոնք ձեռնամուխ են լինում իրենց հետաքրքիր վորևէ հարց միասին ուսումնասիրելուն, լենինյան անկյունում մի վորևէ աշխատանք անցկացնելուն:



20. Խմբակի աշխատանքով լուծվում են հետևյալ խնդիրները՝

ա) ապահովել կարմիր բանակայինների և կարմիր նավատորմայինների համար հնարավորություններ՝ բավականաչափ լուրջ ու մանրակրկիտ ուսումնասիրելու իրենց հետաքրքրող հարցը.

բ) կարմիր բանակայինների և կարմիր նավատորմայինների մեջ դաստիարակել իրենց ընկերների հետ միասին, հասարակական, միարան և կազմակերպված աշխատանք տանելու սովորքներ.

գ) կարմիր բանակայինների և կարմիր նավատորմայինների մեջ պատվաստել իրենց հետա-

քրքրող նյութերն ու հարցերը
ինքնուրույն մշակելու կարողու-
թյուն․

գ) խմբակում մասնակցողնե-
րին քաշել լենինյան անկյան ընդ-
հանուր աշխատանքներին։

21․ Լենինյան անկյան խմբակ-
ների հիմնական տեսակներն են
հանդիսանում՝

ա) առանձին կուս․-քաղաքա-
կան և կոմյերիտական հարցերի
խմբակներ․

բ) առանձին ռազմական հար-
ցերի խմբակներ․

գ) ընդհանուր կրթական խմ-
բակներ․

դ) բնագիտական և հակակրո-
նական խմբակներ․



ե) կարմիր բանակայինների
կյանքի ու կենցաղի հետ կապ-
ված ու առողջապահական հար-
ցերի խմբակներ․

զ) կարմիր բանակայինների
և կարմիր նավաստիների
զվարճությունների կազմակերպող
ու թատերական խմբակներ․

է) սպորտային խմբակներ․

ը) լենինյան անկյան, իսկ հար-
կավոր դեպքում և զորանոցի
կահավորման և զարդարման
գործին օգնող խմբակներ։

22․ Լենինյան անկյան խմբակ-
ների քանակը, նրանց նյութերը,
բնույթն ու նրանցից ամեն մեկի
գոյության ժամանակամիջոցը
փոփոխվում է վաշտի քաղղեկի

և լենինյան խորհրդի կողմից, ելնելով լենինյան առաջ կանգնած ընդհանուր խնդիրներից և կարմիր բանակայինների հետաքրքրություններից ու հարցումներից:

23. Խմբակի աշխատանքը կառուցվում է նրա մասնակցողների լայն ինքնագործունեության սկզբունքների հիմունքներով: Խմբակում մասնակցողները քննում են խմբակի ծրագիրը, մեթոդները, սահմանում են աշխատանքի կարգը և կատարում են առանձին հանձնարարություններ՝ խմբակի պարապմունքները կազմակերպելու գործում: Խմբակը իր մեջ մասնակցողներից ամեն



մեկի առաջ պահանջ է դնում՝ պահպանել ամուր հասարակական կարգապահություն:

24. Խմբակում մասնակցողներն իրենց միջից ընտրում են խմբակի ավագ: Ավագի պարտականությունն է՝ օգնել ղեկավարին խմբակի աշխատանքի կարգավորման և կազմակերպման գործում: Ավագը կազմում է խմբակի ցուցակը, տանում է հաճախման հաշվառումը, հավաքում է խմբակը հաճախողներին և հայտնում նրանց պարապմունքների մասին, հոգ է տանում աշխատանքի տեղի ու հարմարությունների մասին, կատարում է ղե-

կավարի առանձին հանձնարարությունները և այլն։

25․ Խմբակը հնարավորության չափ հայտաբերում է աշխատանքի արդյունքները և դարձնում է այն ամբողջ վաշտի սեփականություն։

26․ Խմբակի անմիջական ղեկավարությունը իրագործվում է խմբակի ղեկավարի միջոցով, վորն ընտրվում և հաստատվում է վաշտի քաղղեկի կողմից։

## ՎԱՇՏԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ

27․ Վաշտային գրադարանի խնդիրների մեջ են մտնում՝

ա) կարմիր բանակայինների ու կարմիր նավատորմայինների



հանրակացարանները գրքեր ու թերթեր ներմուծելով, քաշել նրանց դեպի գիտակցական ընթերցանություն․

բ) գրքի ու թերթի միջոցով կարմիր բանակայինի և կարմիր նավատորմայինի կուլտուրական-քաղաքական հարցումների բավարարումը․

գ) գրքերի և թերթերի օգտագործումը՝ լենինյան անկյան ամբողջ աշխատանքի առաջ կանգնած հարցերը կարմիր բանակային մասսայի մեջ պարզաբանելու համար․

դ) գրքերով և թերթով ապահովել քաղպարապմունքները, ռազմական ուսուցումը, լենին-

*կյանում տարվող ամբողջ աշխատանքը, նույնպես և վաշտի կոմբջիջի ու կուսակցության աջակցող խմբակի պրակտիկ գործունեությունը.*

*ժե) ուժանդակել կարմիր բանակայինների և կարմիր նավաստիների՝ գրքի ու թերթի շուրջը ինքնագործունեության կազմակերպման գործին:*

*ԾԱՆՈԹ.—Նավերի վրա ըստեղծվում է պահականավային տիպի նավային գրադարան, որն աշխատում է 4-րդ հատվածում տեղավորված «Գնդային (Նավային) գրադարան» գլխում ցույց տված ցուցումներով:*



*28. Վաշտային գրադարանն այս խնդիրները լուծում է՝*

*ա) գնդի գրադարանից կոլեկտիվ աբոնեմենտներ ստանալու և նրանց համալրմանը մասնակցելու միջոցով.*

*բ) ռազմական և քաղաքական պարապմունքների համար գրքերի ու ձեռնարկների կենտրոնացման միջոցով.*

*գ) լենինյան անկյան աշխատանքների ընդհանուր ծրագրի հիման վրա կարմիր բանակայինների և կարմիր նավաստիների ընթերցանության ծրագրային ղեկավարության կազմակերպման միջոցով.*

*դ) կարմիր բանակայիններին գրք-*

քից և թերթից օգտվելու գործում հրահանգչական օգնություն ցույց տալու միջոցով.

բ) կարմիր բանակայիններին և կ. նավատորմայինների հարցումների հաշվառման և գըրքերով ու թերթերով տեղեկատու աշխատանքի կազմակերպման միջոցով.

գ) գրքի ու թերթի բարեկամների խմբակներ ստեղծելով և կարմիր բանակայիններին ու կ. նավատորմայիններին գրքի և թերթի շուրջը տարվելիք աշխատանքում օգնություն քա-շելով.

ե) ցուցադրական ագիտացիայի ձևերի միջոցով մասսայակա-



նացնելով գրքերն ու թերթերը և օժանդակելով գրքի և թերթի շուրջը տարվող աշխատանքի զարգացմանը:

29. Վաշտային գրադարանի նշված աշխատանքների անմիջական կազմակերպիչը հանդիսանում է վաշտի գրադարանապետը: Վերջինս աշխատում է վաշտի քաղաքական ղեկավարի ղեկավարությամբ և ստանում է գնդի գրադարանի վարիչից հրահանգչական ցուցումներ: Վաշտի գրադարանապետը մասնակցում է լենինյան անկյան խորհրդի նիստերին:

## ԼԵՆԻՆՅԱՆ ԱՆԿՅԱՆ ԿԱՊԸ ԳՆԴԻ (զորամասի, նավի) ԱԿՈՒՄԲԻ ՅԵՎ ԿԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՋԻՋՆԵՐԻ ՀԵՏ

30. *Լենինյան անկյունը ամենասերտ կապ է հաստատում գընդի (զորամասի) ակումբի հետ: Այդ կապն իրագործվում է հետևյալ միջոցներով.—*

*ա) լենանկյունն օժանդակում է ակումբին՝ նրա կազմակերպությունների մեջ քաշելով ակտիվ կ. բանակայիններին ու կ. նավատորմայիններին.*

*բ) լենինյան անկյունում ակտիվ աշխատանքի քաշելով շարքային և պետկազմին, ակումբային*



*կազմակերպություններում մասնակցողներին, օգտագործելով ակումբում ստացած նրանց սովորույթներն ու գիտելիքները.*

*գ) փաշտային աշխատանքի ծրագիրն ու օրագրաթերթը համաձայնեցնելով գնդի ակումբի աշխատանքների հետ.*

*դ) իր աշխատանքի ամենալավ նվաճումներն ակումբ մտցնելով:*

*ԾԱՆՈԹ.— Նավի լենինյան անկյունը կապ է պահպանում կարմիր սեղանների և կամավորական ընկերությունների հետ, համաձայն 4-րդ հատվածի «Գնդի ակումբի կապը լենանկյունների (կարմիր սեղանների) հետ» գլխում նշված ցուցումների:*

31. Լենինյան անկյունը կապ է պահպանում յուր զորամասի մյուս անկյունների հետ և կատարում է աշխատանքի փորձի փոխանակություն:

32. Լենինյան անկյան կապը կամավորական ընկերությունների բջիջների հետ, իրագործվում է կարմիր բանակայինների ու կ. նավաստիների մեջ այդ ընկերությունների խնդիրների մասսայականացմանն ու յուրացմանն աջակցելու միջոցով:

33. Լենինյան անկյունը հանդիսանում է կարմիր բանակայինների և կ. նավաստիների ու բանվորական, կոմյերի-



տական և այլ կազմակերպությունների իրար հետ հանդիպման և ընկերական մտեցման վայր, կազմակերպում է միատեղ երեկույթներ, էքսկուրսիաներ բանվորական ակումբները, ձեռնարկները և այլն:

## ԼԵՆԻՆՅԱՆ ԱՆԿՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ

34. Լենինյան անկյան աշխատանքների կազմակերպման և ղեկավարման գործին շարքային և պետակազմին մասնակից դարձնելու և դրանով քաղաքական ղեկավարին օգնելու նպատակով, կազմակերպվում է լենինյան խորհուրդ:

35. Լենանկյան խորհուրդն ընտրվում է վաշտի ընդհանուր ժողովի կողմից, 6 ամիս ժամանակով, դեկտեմբերին—հունվարին և հունիսին, չորս անդամով և 2 թեկնածուով: Լենանկյան խորհրդում ընտրվում են ամենաակտիվ և պատրաստված կարմիր բանակայիններից ու պետկազմից: Լենանկյան խորհրդի հինգերորդ անդամն ու նրա նախագահը հանդիսանում է վաշտի (զորամասի) քաղաքական ղեկավարը: Լենանկյան խորհրդի կազմը հաստատվում է զորամասի ռազմական կոմիսարի կողմից:

ԾԱՆՈԹ. 1.—Այն զորամասերում, վորտեղ ըստ հաստիքի քաղ-



ղեկ չկա, լենանկյան խորհրդի գլուխն է կանգնում կուսբջիջի կողմից առանձնացրված և հրամանատարության կողմից հաստատված, կուսանդամներից մեկը:

ԾԱՆՈԹ. 2.—Ցերկրային զորամասերում, ընդհանուր հավաքների ժամանակ, լենինյան անկյան նոր խորհուրդ չի ընտրվում, բայց գոյություն ունեցած խորհրդի մեջ մտցվում են փոփոխական կազմից յերկու ակտիվ կարմիր բանակայիններ:

36. Լենինյան անկյան խորհրդի պարտականություններն են՝

ա) մշակել և քննության առնել լենանկյան աշխատանքների ծրագիրը և օրակարգերը.

բ) նշել լենանկյան հերթական աշխատանքների անցկացման միջոցները և այդ իրականացնելու համար պարտականությունների բաշխումը.

գ) կազմակերպել աշխատանքի նվաճումների ու թերությունների հաշվեառումը.

դ) սահմանել լենինյան անկյան աշխատանքների կարգը և կազմակերպել անկյունում հերթապահություն.

ե) լսել լենանկյան խմբակների ղեկավարների, աշխատանքների առանձին տեսակի ու ձևերի կազմակերպիչների և կարմիր սեղանների վարիչների զեկուցումները.



զ) կապել և հարմարեցնել լենանկյան աշխատանքները մյուս հասարակական կազմակերպությունների աշխատանքների հետ.

է) աջակցել լենանկյան՝ անհրաժեշտ պարագաներով, ձեռնարկներով և գրականությամբ ապահովելու գործին:

37. Լենանկյան խորհրդի անդամների մեջ պարտականությունները բաժանվում են հետևյալ կարգով:—Խորհրդի անդամներից մեկը՝ քարտուղար, վորը տանում է անկյան կարգ ու կանոնին վերաբերյալ խնդիրները: Խորհրդի երկրորդ անդամը հոգ է տանում մասսայական աշխատանքի կազմակերպման գոր-

ծին, յերրորդ անդամը ոժանդակում է խմբակների աշխատանքի կազմակերպման գործին. չորրորդ անդամը տանում է լենինյան կահավորման և ցուցադրական ագիտացիային վերաբերվող խընդիրները: Խորհրդի թեկնածուների վրա դրվում է առանձին պատահական բնույթ կրող խընդիրների կատարումը:

Լենինյան կազմակերպչական և գործնական աշխատանքներին, խորհուրդը մասնակից է դարձնում վաշտի բոլոր ակտիվ կարմիր բանակայիններին, կարմիր նավատորմայիններին և պետկազմին:

38. Լենինյան անկյան խորհըր-



դի նիստերը գումարվում են վաշտի քաղղեկի կողմից ըստ անհրաժեշտության, բայց վոչ ուշ քան յերկու շաբաթը մեկ անգամ: Խորհրդի վորոշումները ուժի մեջ են անցնում վաշտի (գումարտակի) քաղղեկի կողմից հաստատվելուց հետո:

39. Լենինյան խորհուրդը 3 ամիսը մեկ անգամ վաշտի ընդհանուր ժողովին զեկուցում է իր աշխատանքների մասին: Վաշտի ընդհանուր ժողովը գնահատական է տալիս խորհրդի գործունեությանը:

Վաշտի ընդհանուր ժողովի վորոշումները ուժի մեջ են մըտնում գնդի (գործմասի) ռազմա-

կան կոմիսարի կողմից հաստատ-վելուց հետո:

## ԿԱՐԳ ՈՒ ԿԱՆՈՆԸ ԼԵՆԻՆՅԱՆ ԱՆԿՅՈՒՆՈՒՄ

40. Լենինյան աշխատանքը տարվում է շարքային և քաղաքական պարտադիր պարապմունքներից ազատ ժամերին:

41. Լենինյան անկյան աշխատանքների կարգավորումը և որագրաթերթը սահմանվում է լենինյան խորհրդի կողմից և հաստատվում է քաղղեկի կողմից՝ զորամասի հրամանատարության հետ միասին:

42. Քաղաքական ղեկավարին և լենինյան խորհրդին, իրենց



ծրագրային աշխատանքների անցկացման գործում ոգնություն հասցնելու համար, լենինյանկյունում հիմնվում է անկյան հերթապահների ինստիտուտ: Հերթապահության գործին քաշվում են խորհրդի անդամները և լենինյան աշխատանքներին ակտիվ մասնակցություն ունեցող շարքային ու պետակազմը:

Հերթապահության կարգը սահմանվում է լենինյան անկյան խորհրդի կողմից: Հերթապահների գործնեության նկատմամբ հսկողությունը և նրանց հրահանգումը իրագործում է վաշտի քաղաքական ղեկավարը:

43․ Լենինյան անկյան հերթապահը պարտավոր է՝

ա) հետևել լենինյան անկյան կարգ ու կանոնին․

բ) օգնել քաղղեկին և հրամանատարին, նույնպես և կուսբջիջին ու կուսակցությանն օժանդակող խմբակին լենանկյունում հերթական աշխատանքի անցկացման գործում․

գ) օժանդակել կարմիր բանակայինին և կ․ նավատորմայինին՝ իրեն հետաքրքրող հարցի շուրջը պետք յեղած տեղեկանքը ստանալու գործում․

դ) հաշվի առնել կարմիր բանակայինների ու կարմիր նավատորմայինների տրամադրու-



թյունները և օժանդակել նրանց հանգստի ու ինքնագործունեության կազմակերպման գործին․

յե) ցուցակագրել հուշատերում յերեկոյան տարված աշխատանքը և այդ աշխատանքում ակտիվ մասնակցողների քանակը։

## ԼԵՆԻՆՅԱՆ ԱՆԿՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԾՐԱԳՐԱՅՆԱՑՈՒՄՆ ՈՒ ՀԱՇՎԵԱՌՈՒՄԸ

44․ Գնդի քաղլուսաշխատանքների ծրագրի համապատասխան և վաշտի դրության պայմանների ճիշտ հաշվեառման հիման վրա, լենինյան անկյունը կազմում է իր աշխատանքների ծրագիրը և յերկշաբթյա օրագրաթերթը։

Ծրագիրը և որագրաթերթը մշակվում է վաշտի քաղղեկի կողմից, մասնակից դարձնելով, ըստ իրենց աշխատանքի բնագավառի, լենանկյան խորհրդի անդամներին: Որագրաթերթը կախվում է լենանկյունում:

Քաղղեկը ծրագիրը և որագրաթերթը համաձայնեցնում է զորամասի հրամանատարության, կուսբջիջի և կոմյերիտական խմբակի հետ:

45. Լենանկյան աշխատանքները հաշվի առնելու համար տարվում է լենանկյան որագիր: Որագրում ցուցակագրվում է լենանկյան ամբողջ աշխատանքը: Որագրի լեցմանը մասնակից են



դարձվում՝ լենանկյան հերթապահը, վաշտի գրադարանավար և բոլոր խմբակների ղեկավարները: Որագիրը տանելու համար պատասխանատվությունն ընկնում է լենանկյան խորհրդի և վաշտի քաղղեկի վրա:

## ԼԵՆԻՆՅԱՆ ԱՆԿՅԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

46. Լենանկյան տնտեսությունը վորոշվում է հատուկ կանոնադրությունով:

## 4. ԳՆԴԻ ԱԿՈՒՄԲ
(Նավի, առանձին զորամասի)

### ԱԿՈՒՄԲԻ ԿՈՉՈՒՄԸ

47. *Ակումբները ստեղծվում են բոլոր գնդերում, բաժնյակներում, նավերում և նրանց հավասար միավորներում, համաձայն գոյություն ունեցող հաստիքների:*

48. *Գնդի (զորամասի) ակումբի կոչումն է.*

*ա) կարմիր բանակային և կ. նավատորմային ամբողջ մասսայի սպասավորումը մասսայական աշխատանքի զանազան ձևերով.*



*բ) շարքային և կրտսեր պետկազմի ավելի ակտիվ մասի բարձր պահանջների բավարարումը և նրանց հետ ռազմական ու ռազմա-քաղաքական աշխատանք տանելը:*

*գ) պետկազմի և նրա ընտանիքների ազատ ժամանակի կազմակերպման ոժանդակելն ու նրանց կուլտուրական-քաղաքական հարցումների բավարարումը.*

*դ) ոգնություն կուսակցական և կոմյերիտական կազմակերպություններին, կարմիր բանակայինների ու կ. նավատորմայինների մեջ նրանց տարած բոլոր աշխատանքներում, նույնպես և*

կուսանդամների ու կոմյերիտականների կոմունիստական դաստիարակության գործում.

յե) ոգնություն ցուցաբերել հրամանատարությանը, Պաջր–Ավիաքիմի բջիջներին և կուսկազմակերպությանը՝ ազգաբնակության մեջ տարվող ռազմական պրոպագանդայի գործում և փոփոխական շարային ու պետակազմի հետ տարվող աշխատանքներում:

49. Դուրս գալով նշած խնդիրներից, գնդի ակումբը՝

ա) սարքավորում է հանգստի և ռազմաքաղաքական աշխատանքի տեղեր.

բ) զանազան ձևերով անց է



կացնում մասսայական աշխատանք.

գ) կազմակերպում է զանազան ակումբային խմբակներ, քաշելով նրանց մեջ շարքային և պետակազմը.

դ) կարգավորում է գնդի գրադարանի աշխատանքը.

յե) կազմակերպում է դասընթացքներ և ինքնապատրաստման աշխատանքներ.

զ) սերտ կապ է սահմանում զորամասի լենինյան անկյունների (կարմիր սեղանների), կամավորական ընկերությունների և բջիջների ու մյուս բոլոր կազմակերպությունների հետ.

է) ընկերական կապ է պահպա–

նում՝ շեֆական, բանվորական, կոմյերիտական և այլ կազմակերպությունների հետ:

50. Ակումբի աշխատանքների անմիջական ղեկավարությունը իրագործվում է ակումբի պետի կողմից. ակումբի պետը.—

ա) նախագահում է ակումբի վարչության մեջ և ղեկավարում է նրա աշխատանքները.

բ) ղեկավարում է ակումբի բոլոր աշխատակիցների գործնեությունը.

գ) հրահանգում է ակումբի բոլոր կազմակերպությունների ղեկավարներին, ակումբում աշխատող բոլոր կարմիր բանակայիններին և հրամկազմին:



դ) կապում և համաձայնեցնում է ակումբի աշխատանքները գործամասի լենինյան անկյունների (կարմիր սեղանների) և մյուս բոլոր կազմակերպությունների հետ.

յե) ակումբի պետը ակումբի գործունեությունը հյուսում և համաձայնեցնում է գործամասի կուսակցական և կոմյերիտական կազմակերպությունների հետ:

## ԱԿՈՒՄԲԻ ՏԵՂՆ ՈՒ ՆՐԱ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄԸ

51. Իր գործնական աշխատանքի խնդիրների համապատասխան, ակումբը կազմակերպում է՝

ա) հանդիսականների դահլիճ

իր բեմով և կինո-էկրանով (նավերի վրա շարժական կինո և փոքրիկ բեմ).

բ) ընթերցարան.

գ) հանգստի ու խաղերի սենյակներ.

դ) սենյակներ խմբակային աշխատանքների համար (նավի վրա՝ ըստ հնարավորության հատուկ նավասենյակ).

Դրա հետ միասին, ցամաքային և օդային ուժերի զորամասերի ակումբներին կից կազմակերպվում են՝ հրաձգային ձգարան, ռադիո-ընդունիչ ու բարձրախոս, ամառը՝ սպորտհրապարակ, ձմեռը՝ մարմնամարզական դահլիճ, և հնարա-



վորության յեղած դեպքում, դահկային կայան և սահելու սառցավայր:

52. Ակումբի շենքը սարքավորվում է աշխատանքի և հարմարության պահանջների համապատասխան: Ակումբի պատերը զարդարվում են նկարներով ու լոզունգներով: Զանազան ընթացիկ հարցերի պարզաբանման համար ակումբը պատրաստում է ցուցահանդեսներ, սարքավորում է ցուցափեղկեր և այլն: Ակումբն իր կազմակերպությունների աշխատանքների և կարմիր բանակայինների հանգիստը բավարարելու համար

կենտրոնացնում է բոլոր նյութերն ու պարագաները։

## ԱԿՈՒՄԲԻ ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ

53. Ակումբի մասսայական աշխատանքի խնդիրների մեջ են մտնում՝

ա) որվա ամենակարևոր քաղաքական և ռազմական հարցերի, կամպանիաների և հեղափոխական տարեդարձների լուսաբանումը։

բ) Պետակազմի ու կարմիր բանակայինների կուլտուրական հարցումների բավարարումը․

գ) խելացի ու ոգտավետ զվարճություն տալը։



դ) Լայն չափով ակումբ քաշել կարմիր բանակայիններին ու պետակազմին, հայտնաբերելով ակումբի ինքնագործունեության կազմակերպությունների ու լենինյան անկյունների նախաձեռնումները։

54. Մասսայական աշխատանքի հիմնական ձևերն են հանդիսանում՝ թատերական-գեղարվեստական ձևերը, կինոն և ռադիոն, դասախոսությունները, զեկուցումներն ու գրական յերեկոները, տեղեկատու աշխատանքը, մրցակցությունները, տոնակատարությունները, խորհրդային հասարակայնության ձևերը և այլն։

55. Ակումբի մասսայական աշխատանքը կազմակերպվում է՝

ա) ակումբի վարչության և նրա հանձնաժողովների կողմից.

բ) ակումբի խմբակների կողմից.

գ) Լենինյան անկյունների (կարմիր սեղանների) կողմից.

դ) կամավորական ընկերությունների բջիջների կողմից.

յե) քաղաքացիական քաղլուսակազմակերպությունների կողմից.

զ) կուս և կոմյերիտ. կազմակերպությունների հանձնարարությամբ, կուս և կոմյերիտմիության անդամների կողմից:



## ԱԿՈՒՄԲԱՅԻՆ ԽՄԲԱԿ

56. Ակումբային խմբակը՝ կարմիր բանակայինների ու կ. նավատորմայինների կամավորական ինքնագործունեության կազմակերպություն է, որտեղ նրանք համախմբվում են իրենց հետաքրքրող հարցերի մշակման և ակումբին իր աշխատանքներում օգնելու համար:

57. Ակումբի խմբակային աշխատանքը հիմնականում ընդգրկում է ավելի պատրաստված շարքային ու կրտսեր հրամկազմին, միջին հրամկազմին և նրպատակ ունի՝

ա) մասնակցողներին տալ իրենց հետաքրքրող բնագավառի

համար գիտելիքներ ու սովորույթներ․

բ) դաստիարակել հարցերի ինքնուրույն և կոլեկտիվ կերպով ուսումնասիրելու սովորքներ և ստացած գիտելիքները գործնական աշխատանքում գործադրելու ունակություն․

գ) խմբակի անդամներին ակտիվ ոժանդակություն քաշել՝ ակումբի ծրագրային ուսմա-քաղաքական աշխատանքների անցկացման գործում։

58․ Ակումբը առաջին հերթին ապահովում է հետևյալ խմբակների աշխատանքները—ընթացիկ քաղաքականության, հրաձգային-մարտավարական, ընդհանուր



կրթական (տես 54–57 կետերը), հակակրոնական, դրամատիկական՝ կենդանի լրագրի կոլեկտիվի հետ, յերգեցիկ և սպորտային։ Ակումբային խմբակները ստեղծվում են կարմիր բանակայինների կողմից այս կամ այն բնագավառում հայտնաբերված հետաքրքրության չափով։

59․ Հերթական ծրագիրը, աշխատանքի կարգավորումը և խմբակային կարգապահության պահանջները սահմանում է խմբակի անդամների ընդհանուր ժողովը, վորը և քննության է առնում խմբակի ծրագիրը։

60․ Խմբակն իր միջից ընտրում է ավագ կամ նախագահություն

3–5 հոգուց բաղկացած: Խմբակի ավագի (նախագահության) պարտականություններն են՝

ա) օժանդակել ղեկավարին պարապմունքների ճիշտ կազմակերպման գործում և հսկել խմբակի կարգ ու կանոնին ու կարգապահությանը.

բ) նախապատրաստել և անցկացնել խմբակի ժողովները.

գ) ղեկավարի հետ միասին ակումբի վարչության առաջ հաշիվ տալ խմբակի աշխատանքների մասին.

դ) կապ պահել մնացած խմբակների հետ:

Առանձին հանձնարարություններ կատարելու համար, ավագը



(նախագահությունը) առաջ է քաշում նաև խմբակի անդամներին:

61. Խմբակը առաջադրում է իր անդամներին պահանջներ՝ պահել սահմանված կարգ ու կանոնը և հաստատուն հասարակական կարգապահությունը: Խմբակի ընդհանուր ժողովին իրավունք է տրվում դուրս հանել խմբակի կազմից նրանց, ովքեր խախտում են կարգապահությունը և չեն պահում խմբակի կարգուկանոնը:

62. Ակումբային խմբակի անդամները վոչ միայն ուսումնասիրում են այս կամ այն հարցերը, այլ և, ըստ հնարավորու-

թյան, իրենց աշխատանքի արդյունքները բանակային մասսայի սեփականություն են դարձնում, ակտիվ մասնակցություն են ցույց տալիս ակումբի կյանքին և ընդհանուր աշխատանքին։

63. Խմբակի պարապմունքները անցկացնելու և խմբակայինների ինքնուրույն աշխատանքներում ղեկավարություն ցույց տալու համար, ակումբի վարչության հետ համաձայնեցնելով, ակումբի պետի կողմից ակումբային աշխատանքներին ակտիվ մասնակցություն ցույց տվող պետակազմից և համեմատաբար ավելի պատրաստված կ. բանակայիններից ու կ. նավատորմայիններից նը-



շանակվում են ղեկավարներ, վորոնք ակտիվ մասնակցություն են ցույց տալիս ակումբային աշխատանքներին, նույնպես և չեխատանքներին, նույնպես և չեֆական կազմակերպությունների մասնակից դարձնելու ճանապարհով։

## ԳՆԴԻ (Ցավի) ԳՐԱԴԱՐԱՆԸ

64. Գնդի գրադարանի կոչումն է՝

ա) սպասավորել գրքով և թերթով ակումբ հաճախողներին՝ յելնելով նրանց հարցումներից ու ակումբի խնդիրներից.

բ) տալ լենինյան անկյուններին (կարմիր սեղաններին) կոլեկտիվ արոնեմենտներ և հրա-

հանդես վաշտային գրադարանների աշխատանքները․

գ) օժանդակել ակումբին գրքի և թերթի շուրջը հասարակայնության կազմակերպելում․

դ) օգնել ինքնակրթական աշխատանքներին․

յե) ձեռնարկներով սպասարկել պետակազմին, կուսակցական և կոմյերիտ․ կազմակերպություններին, քաղպարապմունքների ղեկավարներին, ակումբի խմբակներին ու դպրոցներին:

65․ Իր կոչման համապատասխան գնդի գրադարանը՝

ա) կազմում է շարքային և կրտսեր պետակազմի ընթերցանության ղեկավարման ծրագիրը․



բ) օգտագործում է մասսայական աշխատանքի զանազան ձևերը և ցուցադրական ագիտացիան․

գ) կազմակերպում է տեղեկատու աշխատանքը՝ այդ գործի մեջ քաշելով այդ ասպարեզում աշխատող անձանց․

դ) ստեղծում է «գրքի և թերթի բարեկամների» խմբակ․

յե) կարգավորում է ընթերցարանում ակտիվ գրադարանային աշխատանք․

զ) հոգ է տանում համապատասխան գրականության ձեռք բերելու և ընտրման մասին:

66․ Գնդի գրադարանի անմիջական ղեկավարությունը իրա-

գործում է գրադարանի վարիչը: Նա զորամասում գրադարանային աշխատանքի դրման պատասխանատուն է հանդիսանում և ձըգտում է սերտորեն կապել գրադարանի գործունեությունը զորամասի ամբողջ ռազմական ու քաղաքական աշխատանքների հետ, քարոզիչների (կարմիր սեղանների վարիչների) միջոցով ղեկավարում է վաշտային գրադարանակետերի աշխատանքը և հրահանգում նրանց:

ԾԱՆՈԹ.— Այն նավերի վրա, վորտեղ չկա հաստիքավոր գրադարանապետ, նրա պարտականությունները կատարում է մի լավ գրագետ կարմիր բանակային, վո–



րը հաստատվում է կոմիսարի կողմից և անց է կացվում զորամասի հրամանով:

## ԻՆՔՆԱԿՐԹԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

67. Ակումբի ինքնակրթական աշխատանքների խնդիրների մեջ են մտնում՝

ա) հնարավորություն տալ զինծառայողին լրացնել իր գիտելիքները.

բ) աջակցել ռազմա ուսումնական (ռազմա-ծովային) հաստատությունները մտնել ցանկացող կարմիր բանակայիններին, կրտսեր հրամանատարին, նույնպես և միջին պետկազմի նախապատրաստմանը.

գ) օգնել զինծառայողներին նրանց ինքնակրթական աշխատանքում:

68. Դրված խնդիրների իրագործման համար, ակումբը ծավալում ե.—

ա) ընդհանուր կրթական խմբակները.

բ) ընդհանուր կրթական անղեկատու աշխատանքը.

գ) նորմալ ռազմա-կրթական հաստատությունները մտնելու համար կարմիր բանակայինի և կրտսեր հրամանատարի նախապատրաստական դասընթացներ.

դ) զանազան ճյուղերի խմբակների ծավալումը, վորոնք հաշված են թե կարմիր բանա-



կայինների և թե պատկազմի համար.

69. Ընդհանուր կրթական աշխատանքը ակումբն անց ե կացնում զորամասի ավագ ուսուցչի հետ միասին: Բոլոր կազմակերպությունների աշխատանքներին ակումբը մասնակից ե դարձնում զորամասի այն պետակազմին, վորոնք կարող են տանել ցույց տրված աշխատանքը, նույնպես և կուլտշեֆերին, քաղաքացիական քաղլուս կազմակերպություններին և այլն:

70. Դասընթացների աշխատանքները ղեկավարելու համար կազմակերպվում ե դասընթացային խորհուրդ, դասընթացների

վարիչի նախագահությամբ և բոլոր դասատուների ու մասնակիցների քանակի համապատասխան ներկայացուցիչների կազմով: Դասընթացային խորհուրդը քննություն է անում ծրագրի, մեթոդիկայի և դասընթացներում պարապմունքների կազմակերպմանը վերաբերող բոլոր հարցերը:

## ԳՆԴԻ ԱԿՈՒՄԲԻ ԿԱՊԸ ԼԵՆԻՆՅԱՆ ԱՆԿՅՈՒՆՆԵՐԻ (կարմիր սեղանների) ՀԵՏ

71. Ակումբը և նրա բոլոր կազմակերպությունները համաձայն 30 հոդվածի, սերտ կապ են պահում վաշտերի լենինյան ան-



կյունների (կարմիր սեղանների) հետ և գործնական օգնություն են ցույց տալիս նրանց աշխատանքներում, և բացի այդ՝

ա) իրենց խմբակների ուժերով, լենինյան անկյուններում կազմակերպում են մասսայական աշխատանք.

բ) իրենց ծրագիրը և օրագրաթերթը համաձայնեցնում են լենինյան անկյունների (կարմիր սեղանների) ծրագրերի ու օրագրաթերթերի հետ.

գ) նյութական և տեխնիքական օգնություն են ցույց տալիս լենինյան անկյուններին (կարմիր սեղաններին), կազմակերպում են ակումբի վարչության և լենին-

կյունների խորհուրդների (կարմիր սեղանների վարիչների) միացյալ նիստեր։

**ԱԿՈՒՄԲԻ ԿԱՊԸ ԿԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՋԻՋՆԵՐԻ ՈՒ ՄՅՈՒՍ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ**

72. Կապը կամավորական ընկերությունների բջիջների հետ իրագործվում է հետևյալ ուղղություններով.

ա) այդ կազմակերպությունների կողմից նշած իրենց աշխատանքներին վերաբերող հարցերը մտցնում է ակումբի աշխատանքների ծրագրի մեջ.

բ) օժանդակում է կամավորական ընկերությունների առաջ



կանգնած հարցերի մշակման համար խմբակներ ստեղծելու գործին.

գ) խմբակներին աշխատանքի է քաշում՝ ագիտացիա տանելու հասարակական կազմակերպությունների համար.

դ) պետք եղած չափով կամավորական ընկերությունների բջիջների հետ ներկայացուցիչների փոխանակություններ է անում։

73. Ակումբը սերտ ընկերական կապ է պահպանում ռազմական և քաղաքացիական կազմակերպությունների հետ, հրավիրում է վերջինների անդամներին իր մասսայական ներկայացում-

ներին, կազմակերպում է միացյալ յերեկոներ, մրցակցություններ և փոխանակվում, և աշխատանքի փորձով:

## Գ՛ՆԴԱՅԻՆ ԱԿՈՒՄԲԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆԸ

74. Շարքային և պետկազմին գնդի ակումբի գործնեյության բոլոր ձևերին համաձայնեցմանը, կազմակերպության ղեկավարմանը, ակումբի պետին օգնություն ցույց տալու և ակումբի աշխատանքների կազմակերպմանը գրավելու նպատակով, զորամասի ընդհանուր ժողովի կողմից ընտրվում է գնդի ակումբի վարչություն:



75. Ակումբի վարչությունը ընտրվում է մի տարի ժամանակով, դեկտեմբեր–հունվար ամսին, 8–ից 10–ը անդամներով և 3 թեկնածուներով՝ ավելի ակտիվ և ակումբային աշխատանքներով հետաքրքրվող շարքային և պետկազմից: Վարչության տասնումեկյերորդ (9–րդ) անդամը և նրա նախագահը. հանդիսանում է ակումբի պետը: Ակումբի վարչության կազմը հաստատվում է զորամասի կոմիսարի կողմից և տրվում է զորամասի հրամանով:

ԾԱՆՈԹ. 1.—Նավերի վրա և յերկրային զորամասերում ակումբի վարչությունն ընտրվում է 6 ամիս ժամանակով. ընտրության

յերկրորդ ժամկետը սահմանվում է հունիս ամիսը։ Ցերկրային զորամասի ակումբի վարչության մեջ ցանկալի յե մտցնել փոփոխական կազմի ակտիվ կարմիր բանակայիններին և հրամանատարներին։

ԾԱՆՈԹ. 2.—Գնդից փոքր զորամասերում ակումբի վարչության անդամների քանակը կարելի յե պակասեցնել (նավերի վրա անդամների քանակը սահմանվում է 6-ից 8-ը մարդ)։

76. Ակումբի վարչության ղեկավարման շրջանակի մեջ են մտնում.—

ա) ուսումնասիրել զինծառայողի հարցումները և նրանց բավարարման ուղիներ գտնել։ Քննության առնել կարմիր բանակայիններին և պետակազմին ակումբային աշխատանքներին գրավելու միջոցները.

բ) մշակել գնդի ակումբի աշխատանքների ծրագիրը և ղեկավարել նրա կիրառումը կյանքի մեջ.

գ) համաձայնեցնել գնդի ակումբի բոլոր տեսակի ու բնագավառների գործունեությունը, աջակցել լենինյան անկյունների (կարմիր սեղանների) աշխատանքի կազմակերպմանը.

դ) քննության առնել ակումբի կազմակերպությունների բոլոր ղեկավարների թեկնածությունը.

գ) ղեկավարել ակումբի բոլոր կազմակերպությունների աշխատանքները, հաստատել նրանց և լսել հաշվետվություններ.

դ) հոգ տանել գնդի ակումբի շենքի կահավորման և զարդարման մասին, քննություն անել գնդի ակումբի ծախքերի նախահաշիվները և նրա տնտեսության վերաբերող հարցերը.

ե) սահմանել գործնական կապ և համագործակցություն զորամասի բոլոր կազմակերպությունների, քաղաքացիական քաղլուսկազմակերպությունների, Կարմիր Բանակի տների, բազային ակումբների, շեֆական և այլ կազմակերպությունների հետ.



զ) յերկրային զորամասերում ակումբի վարչությունն ակումբի պետին օգնելու խնդիրն իրականացնում է միջհավաքային աշխատանքների գործնականորեն անցկացումով, առանձին ակումբային կազմակերպություններին այդ աշխատանքին մասնակից դարձնելու միջոցով:

77. Ակումբի վարչությունն աշխատանքներն իր անդամների մեջ բաշխում է հետևյալ կարգով (հաշվի առնելով այդ գնդքում տեղական պայմանները)՝

ա) ակումբի մասսայական աշխատանքի կազմակերպումը.

բ) ակումբի խմբակներին կազ-

մակերպումը և նրանց գործնեյության համաձայնեցումը.

գ) ակումբի դասընթացային և ինքնակրթական աշխատանքների կարգավորումը (զորամասի ավագ ուսուցչի հետ միասին).

դ) ակումբի զարդարման և ցուցադրական պրոպագանդայի դրումը.

յե) եքսկուրսիաների կազմակերպումը և կարմիր բանակայինների ու բանվորական ակումբների կապի իրագործումը.

զ) ակումբային հանգստի և հանգստի սենյակում աշխատանքների կազմակերպումը (խաղեր, շախմատ, շաշկի).

է) ակումբային կարգ ու կա-



նոնի հարցերը և ակումբի աշխատանքների հաշվեառումը.

ը) Ֆիզկուլտուրային և սպորտ աշխատանքների կազմակերպումը.

թ) քարտուղարությունը ակումբի վարչության մեջ:

78. Ակումբի վարչության նիստերը գումարվում են ակումբի պետի կողմից՝ պետք յեղածի չափով, բայց վոչ ուշ քան ամիսը 2 անգամ: Ակումբի վարչության նիստերում, բացի ծրագրային աշխատանքի անցկացման խնդիրները քննության առնելուց, լսվում են վարչության անդամների, գրադարանի, խմբակների զեկուցումները, նույնպես և ա-

կումբային կարգ ու կանոնին և տնտեսությանը վերաբերվող հարցերն ու արվում են գործնական ցուցումներ ակումբային բոլոր կազմակերպությունների համար:

Ակումբի վարչության վորոշումներն ուժի մեջ են մնում գործադիր կոմիտեի կողմից հաստատվելուց հետո:

79. Ակտիվ զինծառայողներին ակումբի աշխատանքներին քաշելու համար, վարչությունը կազմակերպում է ինչպես մնայուն այնպես և ժամանակավոր հանձնաժողովներ: Այդպիսի հանձնաժողովներ կարող են լինել՝ մասսայական աշխատանքի



հանձնաժողով, խմբակային աշխատանքի հանձնաժողով, ակումբի զարդարման հանձնաժողով, եքսկուրսիոն հանձնաժողով, տոնակատարությունների նախապատրաստման և այլն հանձնաժողովներ: Ամեն մի հանձնաժողովի մեջ մտնում են՝ վորպես նախագահ՝ համապատասխան բնագավառում աշխատանքը ղեկավարողը, վարչության անդամներից մեկը, իսկ վորպես անդամներ՝ ակումբի աշխատանքներին մի քանի ակտիվ մասնակցողներ, վորոնք նշվում են վարչության կողմից կամ իրենք ցանկություն են հայտնում աշխատել այս կամ այն հանձնաժողովում:

ԾԱՆՈԹ. 1. – Հարկավոր դեպքում վարչությանը կից կազմակերպվում է ակտիվի հետ աշխատանք տանող հանձնաժողով ակումբի պետի նախագահությամբ և 2–4 ակտիվ հրամանատարների անդամությամբ:

ԾԱՆՈԹ. 2 – Նավերի վրա հնարավոր է ստեղծել կարմիր սեղենների աշխատանքների հանձնաժողով:

80. Ակումբի վարչությունը կարիք չեղած դեպքերում կանչում է խմբակների նախագահությունների (ավագների) խորհըրդակցություն, խմբակների ուղղությունների աշխատանքների կարգավորման և նրանց բոլոր



կազմակերպչական միջոցառումների համաձայնեցման համար:

81. Ակումբի վարչությունն իր աշխատանքների համար հաշվետվություն է տալիս զորամասի ընդհանուր ժողովին, պարբերական զեկուցումներ է անում վաշտերի ժողովներին, յերբեմնակի զեկուցումներ ակումբային յերեկոներին, լենինյան անկյուններում, և այլն:

82. Զորամասի ընդհանուր ժողովին իրավունք է վերապահվում քննության առնելու ավելի կարևոր հարցերը, վորոնք կապված են ակումբի կյանքի և աշխատանքի հետ, գնահատելու ակումբի վարչության գործունեու-

թյունը և նշելու նրա աշխատանքի գործնական ուղիները: Ընդհանուր ժողովի որոշումներն ուժի մեջ են մտնում զորամասի ռազմկոմի հաստատումից հետո:

Ժողովին իրավունք է տրվում հետ կանչելու և վաղաժամ վերընտրելու վարչության առանձին՝ գործը լքած կամ վոչ աշխատունակ անդամներին:

## ԱԿՈՒՄԲԻ ԿԱՐԳ ՈՒ ԿԱՆՈՆԸ

83. Ակումբի աշխատանքը դընում է պարտադիր ռազմական և քաղաքական պարապմունքներից ազատ ժամանակ:

84. Ակումբի աշխատանքների կարգավորումն ու որագրաթեր-



թը վորոշվում է ակումբի վարչության կողմից և համաձայնեցվում է զորամասի հրամանատարության հետ:

85. Ակումբը ազատ մուտքի իրավունք ունեն ինչպես ընակազմային նույնպես և փոփոխիկ ամբողջ շարքային և պետկազմն ու նրանց ընտանիքները, նաև շեֆական քաղաքացիական կազմակերպությունների անդամները: Ակումբի բոլոր հաճախորդները խստորեն պահպանում են ակումբի վարչության կողմից սահմանված կարգ ու կանոնը:

86. Ակումբի վարչությունը սահմանում է ամենորյա հերթապահություն՝ վարչության կամ

խմբակների նախագահությունների (ավագների) անդամներից։ Ակումբի հերթապահի պարտականությունների մեջ են մտնում՝

ա) հսկել ակումբում տարվող ընթացիկ աշխատանքներին.

բ) աջակցել խմբակներին և մասսայական աշխատանքի կազմակերպիչներին իրենց աշխատանքները ժամանակին սկսելու.

գ) լուծում տալ ակումբում առաջացող բոլոր թյուրիմացություններին.

դ) ուսումնասիրել ակումբ հաճախողների հարցումներն ու պահանջները.

ե) աջակցել ակումբ հաճա-



խողներին իրենց հանգիստը կազմակերպելու գործում.

զ) տանել անցկացված աշխատանքի հաշվառումը։

Հերթապահին օգնելու համար հերթով քաշվում են խմբակների անդամներից և ակումբի ակտիվիստներից (դռների մոտ, սենյակներում և այլն՝ հերթապահության համար), վորոնց հերթապահը հրահանգում է և բաշխում ըստ տեղերի։

## ԾՐԱԳՐԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ ՀԱՇՎԵԱՌՈՒՄ

87. Ակումբի ծրագիրը կազմվում է՝

ա) քաղորդանների ծրագրային

ցուցումների և առորյա ընթացիկ քաղաքական կյանքի նյութերի հիման վրա.

բ) հաշվի առնելով տվյալ գործամասի կոնկրետ պայմանները.

գ) ուսումնասիրելով և հաշվի առնելով ակումբ հաճախողների հարցումներն ու հետաքրքրությունը:

Աշխատանքի ծրագիրը՝ ըստ առանձին տեսակների, կազմվում է ակումբի վարչության անդամների կողմից, քաշելով այդ գործին խմբակների նախագահություններին (ավագներին) և քննության է առնվում վարչության նիստերում: Ակումբի ծրագրի հիմնական բաժինները հան-



դիսանում են վերև հիշված՝ ակումբի աշխատանքի տեսակները (մասսայական աշխատանք, խմբակային աշխատանք, ինքնակրթական աշխատանք, գրադարան և այլն):

Ակումբի պետը ակումբի աշխատանքների ծրագիրը համաձայնեցնում է կուսկազմակերպության և գործամասի հրամանատարության հետ: Ծրագիրը հաստատվում է գործամասի կոմխարի կողմից:

Ծրագրի հիման վրա կազմվում է որագրաթերթ (մի ամսվա կամ յերկշաբաթյա) ըստ ակումբի գործնեյության յուրաքանչյուր տեսակների:

ԾԱՆՈԹ.— Լենինյան անկյունների (կարմիր սեղանների) աշխատանքների ծրագիրը ակումբի վարչության կողմից չի կազմվում և քննության չի առնվում, բայց գնդի ակումբի ծրագրի մեջ հաշվի յե առնվում լենինյան անկյունների հետ կապի և նրանց օգնության խնդիրները։

88. Ակումբի աշխատանքների հաշվառումն իրագործվում է.—

ա) ակումբի հերթապահի կողմից՝ օրագիրը տանելու միջոցով.

բ) ակումբային յուրաքանչյուր կազմակերպության կողմից օրագիր տանելու միջոցով.



գ) ակումբի հաճախումների հաշվառման միջոցով.

դ) գնդի ակումբի վարչության և ակումբային մյուս կազմակերպությունների նիստերի արձանագրությունները տանելու միջոցով։

## ԱԿՈՒՄԲԻ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

89. Ակումբի տնտեսությունը սահմանվում է հատուկ կանոնադրությամբ։

ԲԳԿԲ Քաղաքական Վարչության պետի տեղակալ՝ ՍԼԱՎԻՆ

<< Ազգային գրադարան
NL0228960

145

52.160